

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՆ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ՓՈՔՐԻԿ ԾԱՂԿԵՓՈԻՆՁ ՄԸ ՄԱՐՄԱՐԵԱՅ ՇԻՐՄԱՔԱՐԻՆ (Վազգէն Ա. Վեհափառի Ծննդեան 110-ամեայ յաբելեանին առթիւ)

Քանալի բառեր. Ամենայն հայոց կաթողիկոս, Վազգէն Ա., վեհափառ, ակնարկ, անդրադարձ, կեանք և գործունէութիւն, գրական ժառանգութիւն, յոբելեան, յարգանքի տուրք:

Key words: Catholicos of all Armenians, Vazgen I, His Holiness, essay, life and activity, literary heritage, anniversary, tribute.

Ճիշդ է ըսուածը, թէ ոմանք կը ծնին մեծ, ոմանք կը հասնին մեծութեան, ոմանց կը տրուի մեծութիւն: Վազգէն Ա. կաթողիկոս ծնած էր մեծ, մնաց մեծութիւն և դասուեցաւ անմահներու շարքին: Ան իր շնորհները ընծայաբերեց հայ եկեղեցւոյ ծառայութեան, ճանապարհ մը, որ մեր ազգի փոթորկայոյզ կեանքի ընթացքին յաճախ տառապալից ու փշոտ եղած է:

Վազգէն Հայրապետ (աւագանի անունով՝ Լեւոն-Կարապետ) ծնած էր 1908 թուի Սեպտեմբեր 20-ին, բարեպաշտ ընտանիքի մը մէջ: Անոր մեծ հայրն ու հայրը ժառանգաբար եղած են արհեստաւորներ, որոնք իրենց հանապազօրեայ հացը կը վաստակէին արդար և քրտնաջան աշխատանքով¹:

Նախախնամութեան Աջն է, որ օրօրոցէն կը բարձրացնէ և կ'առաջնորդէ զինք ընտանեկան խոնարհ յարկէն մինչեւ Լուսաւորչի Գահին:

1913-ին Պալճեաններու ընտանիքը կ'այցելէ Կոստանդնուպոլիս: Չորս տարեկան փոքրիկ Լեւոն-Կարապետ կը յաճախէ Կէտիկ Փաշայի ազգային մանկապարտէզը: Առաջին անգամ հայերէն այբուբենը կը սկսի հեգել ուսուցչուհի մօր ծունկերուն առջեւ: Երեխայի նախա-դպրոցական դաստիարակութեան, անոր սրտի, հոգիի և մտքի վրայ մեծ ազդեցութիւն կը ձգէ հարազատ մայրը՝ որ իր մայրական անխարդախ կաթին հետ իր զակին կը ջամբէր նաեւ հաւատքի սրբազան հուրը, մայրենի լեզուի քաղցրութիւնն ու ճաշակը, Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտամունքը, ազգասիրութեան շունչն ու ոգին:

1914-ի գարնան, մանուկ Լեւոն-Կարապետ ծնողքին հետ կը վերադառայ Ռուս-մանիա, ուր կը յաճախէ տեղւոյն հայկական ազգային մանկապարտէզ, մինչեւ 1916 թուականը: Համաշխարհային առաջին պատերազմի տխուր օրերուն, Պալճեան ընտանիքը, հազարաւոր հայ գաղթականներու հետ ապաստան կը գտնէ Օտեսա քաղաքին մէջ: Երեխայի դաստիարակութեան հոգը դարձեալ սիրով կը ստանձնէ և կը շարունակէ մայրը: Միաժամանակ՝ ծնողքը նիւթական ծանր զրկանքներ կրելով

¹ Գրիգորեան Գ. Վրդ. Մեսրոպ, Վեհափառը, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 11:

հանդերձ, տան մէջ երեխային մասնաւոր դասեր տալու համար կը հրաւիրեն ուսուցիչ և մտաւորական Աշոտ Սպանդարեանը²:

Ուսումնատենչ Լեւոն իր նախնական, միջնակարգ ու բարձրագոյն կրթութիւնը կը ստանայ Պուքրէշի, նախ՝ հայկական, ապա գերմանական ու պետական ուսումնական հաստատութիւններու մէջ: Անոր ծնողքը կանգ չառնէր ո՛չ մէկ զոհողութեան առջեւ իրենց միակ զաւկին կրթութեան համար:

Պատանի Լեւոն-Կարապետ, Պուքրէշի մէջ փոքր տարիքէն կ'անդամակցէր Հայ Մարմնակրթական Միութեան: Մինչեւ 25 տարեկան կ'աշխատէր այդ միութեան մէջ, նախ որպէս սկաուտ և ապա ղեկավար անդամ: Շուտով խոստումնալից երիտասարդին առջեւ կը բացուին գործունէութեան աւելի լայն ասպարէզներ: Ան ծանօթ և սիրուած դէմք մըն էր Պուքրէշի հայ ազգային շրջանակներէն ներս, փնտռուած ու ծափահարուած «ասմունքի վարպետ» բոլոր հանդէսներու, ուր Թումանեանէն, Վարուժանէն, Մեծարենցէն, Սիամանթոյէն, Չարենցէն իր կատարած արտասանութիւններով հայրենասիրական գերազանց ապրումի պահեր կը շնորհէր հանդիսականներուն³:

1929-էն սկսեալ օգնական ուսուցչի և քարտուղարի պաշտօն կը ստանձնէ Պուքրէշի հայոց վարժարանէն ներս, միաժամանակ շարունակելով իր ուսումը:

1931-1932 ուսումնական տարեշրջանին Լեւոն Պալճեան մուտքի քննութիւններն յաջողութեամբ յանձնելէն յետոյ, կը մտնէ Պուքրէշի պետական համալսարանի գրականութեան և փիլիսոփայութեան բաժինը, մասնագիտութիւն ընտրելով մանկավարժութիւնը, հոգեբանութիւնն ու հասարակական գիտութիւնները:

1936-ին բազմակողմանիօրէն զարգացած, կայուն և խոր գիտելիքներու տէր, ան կ'աւարտէ պետական համալսարանը, աւարտաճառ ներկայացնելով «Կարգապահութեան հարցը մանկավարժութեան մէջ» թեման և համալսարանէն կը վկայուի որպէս մանկավարժ: 1937-ին կ'աւարտէ նաեւ համալսարանի գործնական մանկավարժութեան բաժինը⁴:

1929-էն մինչեւ 1943՝ Լեւոն Պալճեան կը գործէ Պուքրէշի մէջ, կարեւոր ծառայութիւններ մատուցանելով հայ համայնքի կրթական, հասարակական և մշակութային կեանքին:

Իր երկարամեայ ուսուցչական ասպարէզին մէջ ուսանողներուն ջամբած է ուսում և գիտութիւն, ներշնչած է մանաւանդ հայրենասիրական ոգի, հայ մշակոյթի սէր⁵:

1937-1942 տարիներուն որոշ մտերմութիւն կը ստեղծուի ռումինահայ թեմի օրուան առաջնորդ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Զոհրապեանի և երիտասարդ ուսուցչի միջեւ, հոգեւոր և մտաւորական գետնի վրայ: Այս շրջանին է, որ ապագայ Հայրապետը կը ծանօթանայ Հայ Եկեղեցւոյ պատմութեան, դաւանանքին, և կազմակերպութեան: Նոյն շրջանին է մանաւանդ, որ անոր հոգիի և գիտակցութեան մէջ կ'ամրապնդուի սէրը և պաշտամունքը դէպի Ս. Էջմիածին: Երիտասարդ ուսուցիչն իր ազատ պահերը կ'անցնէր սրբազանի հարուստ գրադարանին մէջ, կը պարապէր Հայ Եկեղեցւոյ պատմութեան, աստուածաբանութեան ուսումնասիրութեամբ⁶:

1942-ի Հոկտեմբերին կը վախճանի Ռումանիոյ թեմի առաջնորդ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Զոհրապեանը: Առաջնորդական պատասխանատու Աթոռը կը մնայ թափուր: Այդ օրերուն «աչ՛ ամենեցուն ի նա հայէին»: Բոլորի մտքին մէջ գտնուած էր,

² Վազգէն Ա. Հայրապետ Հայոց, Կենսագրութիւն, կոնդակներ, փառգներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 10:

³ Նոյն տեղը, էջ 10-11:

⁴ Նոյն տեղը

⁵ Գրիգորեան Գ. Վրդ. Մեսրոպ, Վեհափառ, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 12:

⁶ Վազգէն Ա. Հայրապետ Հայոց, Կենսագրութիւն, կոնդակներ, փառգներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 13:

արդեն կարճ առաջնորդը, և այդ՝ ուսուցիչ, համալսարանաւարտ, հաւատաւոր ու ազնիւ Լեւոն Պալճեանն էր: «Ձայն բազմաց՝ ձայն Աստուծոյ»: «Ոչ եթէ անձամբ ո՛ր առնու զպատիւ [պաշտաման], այլ կոչեցեալն յԱստուծոյ՝ որպէս և Ահարովն» (Եբր. Ե 4): Քահանայութեան պատիւը աստուածային կոչում մըն է, ուստի Նախախնամութեան տնօրինութեամբ ան կը կոչուի այդ բարձր հոգեւոր առաքելութեան նուիրական գործին⁷:

Եւ հա՛ս Աստուծոյ կոչումով, իր ժողովուրդի ընտրութեամբ, 1943-ի Սեպտեմբեր 30-ին, Լեւոն-Կարապետ Աթէնքի հայոց Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ, Յունաստանի հայոց առաջնորդ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մազլումեանի ձեռամբ կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ վերակոչուելով Տ. Վազգէն Վարդապետ, մէկ օրուան մէջ աշխարհական վիճակէն բարձրանալով մինչեւ վարդապետութիւն: Կը հրաժարի աշխարհիկ կեանքէն, ինչպէս Ս. Մեսրոպ իր ժամանակին՝ զինուորական ասպարէզէն, դառնալով վանական-վարդապետ:

Պուրէշ դարձին, Վազգէն վարդապետ կը հետեւի աստուածաբանական գիտութեան: Կ'ընտրուի Ռումանահայ թեմի փոխ-առաջնորդ և 1948-ին կը դառնայ առաջնորդ ու կ'արժանանայ ծայրագոյն վարդապետութեան աստիճանի: Իր առաջնորդութեան տարիներուն կ'ամրապնդուի թեմի կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Մայր Հայրենիքի հետ: Ռումանահայ թեմը և հայ գաղութը անոր օրով կ'ապրին Հայրենիքի սիրով և Մայր Աթոռի գաղափարով:

1951-ին, Գէորգ Զ. Զէօրէքճեան Կաթողիկոս, գնահատելով անոր մաքուր կեանքը և վարչական եռանդուն գործունէութիւնը, զինք եպիսկոպոս կ'օծէ: Կաթողիկոսի վախճանումէն ետք, կ'ընտրուի Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ:

Նորած Սրբազանը, իւրայատուկ կորովով, անաղմուկ ու շինարար աշխատանքով և անձնուէր ծառայութեամբ կը շարունակէ իր առաջնորդական պաշտօնը, յօգուտ իր թեմի ազգային-եկեղեցական կեանքի զարգացման և կազմակերպման⁸:

Ուսուցչական, հասարակական և եկեղեցա-վարչական բեղմնաւոր գործունէութենէ զատ, Վազգէն Հայրապետ կատարած է նաեւ գրական շնորհալի աշխատանք:

1937-ին ան գրական ասպարէզ իջաւ որպէս հրապարակագիր, բովանդակալից յօդուածներ և ակնարկներ գրելով ռումանահայ կեանքի և Հայ մշակույթի մասին: Գրական առաջին իսկ քայլերէն ան հանդէս բերած է մտածելու ինքնուրոյնութիւն, իրաւ հայրենասիրութիւն:

1937-ի Յունիսին, ռումանահայ համալսարանական քանի մը հայրենասէր ընկերներու հետ ան կը հրատարակէ «Հերկ» ամսագիրը, բաղկացած 16 մեծագիր էջերէ: Ինքն ալ կը խմբագրէր այդ մտքի հանդէսը, ստորագրելով այնտեղ խմբագրականներ և յօդուածներ հայ մշակույթի, հայոց պատմութեան, հայ ոգիի, հայ մտքի, Ս. Էջմիածնի, հայ երիտասարդութեան, հայ Սփիւռքի մասին, շահեկան և իմաստալից խորհրդածութիւններով:

Կ. Պալճեան «Հերկ»-ի մէջ հանդէս կու գար հրապարակագրի իր խոստումնալից տաղանդով, գրական փորձով ու ճաշակով: Երիտասարդ խմբագիրը, ինքնատիպ ոճով և ինքնուրոյն փիլիսոփայութեամբ, մեր ազգային-եկեղեցական և մշակութային կեանքին շուրջ, ընթերցողի մտքին մէջ կ'արծարծէր Հայրենիքի սէրը, հայ մշակույթի պաշտամունքը, Հայ Եկեղեցւոյ հուրը, հրաւէր կը կարդար բոլորին՝ առաջնորդուիլ գիտութեան լոյսով, մտածումի, կարգապահութեան ճանապարհով:

Այդ օրերուն Սփիւռքի հայութիւնը յուզող ազգային-եկեղեցական և մշակութային հարցերը երիտասարդ խմբագրի գրչին տակ խորհրդածութեան նիւթ կը դառնային գրական գեղեցիկ և ոգեշնչող յօդուածներու մէջ, գրուած համոզմունքով, լաւատեսու-

⁷ Տե՛ս նոյն տեղը:

⁸ Գրիգորեան Գ. Վրդ. Մեսրոպ, Վեհափառը, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 12:

թեամբ:

«Հերկ»-ը լոյս տեսաւ 12 համար միայն և փակուեցաւ նիւթական պայմաններու բացակայութեան պատճառաւ⁹:

1938-ի Հոկտեմբերին Պուքրէշի Մկրտիչ Պոտուրեանի «Գաղութահայ տարեգիրք»-ի մէջ լոյս տեսաւ Կ. Պալճեանի «Անձնատրութեան գաղափարի մասին (մտածումներ)» խորագիրը կրող փիլիսոփայական ուսումնասիրութիւնը, որու մէջ Կ. Պալճեան փիլիսոփայական և հոգեբանական դիրքերէ քննութեան կ'առնէր պատմականօրէն կազմակերպուած «անձնատրութիւն» մարդը, որպէս կենսաբանական, հոգեբանական և հասարակական էակ:

1940-ին Պուքրէշի՝ «Հայ մամուլ»-ի տպարանէն, լոյս կ'ընծայուի Կ. Պալճեանի 62 էջերէ բաղկացեալ «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վէպին մէջ» վերլուծական ուսումնասիրութեան փորձը, որ հայրենասիրական շունչով գրուած գրախօսական մըն է «Մուսա լերան քառասուն օրերը» վէպի մասին:

Իր վերլուծական փորձին մէջ, Կ. Պալճեան գուրգուրանքով կը կենայ վէպի տիպական կերպարներու վրայ: Վէպի հիմնական հերոսը, իհարկէ ազատասէր, հաւատաւոր ժողովուրդն է, որ վճռած է «մեռնիլ զէն ի ձեռին, մեռնիլ պատուով, իր տան սեմին վրայ», քան գլուխ խոնարհել բռնակալի լուծի առաջ: Կ. Պալճեան շատ ջերմ և սրտառու կերպով կը խօսի դրական և հայրենասէր կերպարներու մասին, ինչպիսին են վէպի գլխաւոր հերոս՝ Գաբրիէլ Բագրատեան, Տ. Հայկազուն քահանայ, պատանի հերոսներ՝ Հայկ ու Ստեփան «որոնք կը մարմնացնեն հայ պատանիին հոգեկան վսեմ թոխլները և անգուգական կորովն ու քաջութիւնը» (էջ 44): Կ. Պալճեան ցասումնալից դատապարտութեան դառն խօսքեր ունի բացասական կերպարներու մասին, ինչպիսին են վարժապետ՝ Հրանդ Ոսկանեան և Սարգիս Կիլիկեան, որոնք իրենց «զգուելի արարներով և այնքան հոգեկան անկումներով, ... դրական գործ մը կատարելու անընդունակ, ... նեմզ ձեւերով կը փորձեն ցեխ նետել ուրիշներու վրայ... և կ'ուզեն եղածը քանդել, առանց տեղը բան մը շինել գիտնալով» (էջ 35-36):

«Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վէպին մէջ» վերլուծական փորձը միաժամանակ երախտագիտական սրտագին խօսք մըն է յանուն հայ ժողովուրդին՝ ուղղուած մեծանուն գրագէտ՝ Ֆրանց Վերֆելին, հայ ժողովուրդին մատուցած անոր «անգուգական ծառայութեան համար»¹⁰:

1943-ին Պուքրէշի «Սրկիվինցա» տպարանէն լոյս կ'ընծայուի Կ. Պալճեանի «Խրիմեան Հայրիկ որպէս դաստիարակ» 155 էջնոց մանկավարժական ուսումնասիրութիւնը:

Դիրքը կը բաղկանայ տասնմէկ ենթագլուխներէ, ուր առաջին անգամ ըլլալով ձեռնհասօրէն և ծաւալուն կերպով ուսումնասիրութեան առարկայ դարձած է Խրիմեան Հայրիկի մանկավարժական վաստակը: Կ. Պալճեանի այս ուսումնասիրութիւնը նորութիւն էր իր տեսակի մէջ և այդ իսկ պատճառաւ կրկնապէս արժէքաւոր, հետաքրքիր և այժմէական:

Իրապէս, մինչ այս ուսումնասիրութիւնը մոռացութեան տրուած էր Խրիմեան Հայրիկի վաստակը որպէս մանկավարժի: Խրիմեան, «մեր ընտանեկան դրախտին աւետարանիչը, մեր հայ թոռնիկներուն մեծահաւատ Պապիկը», ինչպէս անոր անուանած է Սուրբ Աթոռոյս գահակալներէն Եղիշէ Դուրեան Պատրիարք, մեծ է և անմահ նաեւ որպէս մանկավարժ և ուսուցիչ, որը «կը պահանջէ լոյս և գիտութիւն տանիլ հայ գիւղացիին խրճիթէն ներս, հայ գիւղացիին արտին վրայ» (էջ 15): Կ. Պալճեան Խրիմեան Հայրիկը կը ներկայացնէ իրաւամբ որպէս «հայրը հայ մանկավարժութեան»: Ան ջերմօրէն, յուզումով և պաշտամունքով գրած է մեծ դաստիարակի, ժողովուրդի մեծ

⁹ Վագգէն Ա Հայրապետ Հայոց, Կենսագրութիւն, կոնդակներ, քաղաքներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1958, էջ 21:

¹⁰ Նոյն տեղը, էջ 23-24:

ուսուցչի սրտառուչ պատկերը, իր ամբողջական գրաչույթեան և վեհութեան մէջ:

1945-ին Պուքրէշի «Ալֆա» տպարանէն լոյս կ'ընծայուի Վազգէն Վարդապետ Պալճեանի «Մեր պատարագը» աշխատութիւնը, որու մէջ հաւատացեալ հայ ժողովուրդի և մեր եկեղեցւոյ նորահաս սերունդին համար հասկնալի ձեւով բացատրած է սուրբ պատարագի խորհուրդը: Գիրքը բաղկացած է 104 էջերէ:

«Մեր պատարագը» գիրքին մէջ Վազգէն Վարդապետ կը բացատրէ պատարագի սուրբ խորհուրդին մօտենալու կերպը, հոգեւոր պատրաստութիւնը, սուրբ պատարագի երգերու, աղօթքներու նշանակութիւնը: Կը խօսի մարդեղութեան խորհուրդին վրայ, գեղեցկօրէն բացատրելով սուրբ պատարագի երկու գլխաւոր մասերը՝ Նոնալից պատարագը և Հաւատացելոց պատարագը, ապա «Ողջոյն»-ը, «Սուրբ, սուրբ»-ի կանոնը, «Վերացուցումն», «Ճաշակումն» ու «Ս. Հաղորդութիւն»-ը, «Աղօթք գոհութեան»-ը, և «Աղօթք ի մէջ եկեղեցւոյ» մասերը¹¹:

1945-ին «Ալֆա» տպարանէն լոյս կ'ընծայուի նաեւ Վազգէն Վարդապետի «Խօսք հայրենիքի մասին» գրքոյկը, Պուքրէշի հայոց եկեղեցւոյ և հրապարակային ժողովներու մէջ արտասանուած քարոզներու և ճառերու ամփոփումը, գրուած Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետութեան ազգընտիր Տեղակալ՝ Ամենապատիւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Չէօրէքճեանի 1944 թուականի Սեպտեմբեր 20-ի ծանօթ շրջաբերական-կոնդակի առիթով, որն ուղղուած էր սփիւռքահայ ժողովուրդին: Այդ քարոզներու և ճառերու հիմնական գաղափարական բովանդակութիւնը եկեղեցասիրութիւնն ու հայրենասիրութիւնն է:

Վազգէն Սրբազան 1954-ին, Պուքրէշի «Նոր կեանք» տպարանէն լոյս կ'ընծայէ Մայր Հայրենիք և Ս. Էջմիածին կատարած իր այցելութիւններէն քաղած խանդավառ տպաւորութիւններն ու յուշերը՝ «Հայրենի արեւիմ տակ» գեղեցիկ խորագրին ներքեւ:

Սրբազանը 1945 թուականէն ի վեր զանազան առիթներով եղած է «Հայրենի արեւին տակ», շրջագայած ու ներշնչուած է Հայրենիքի պայծառ իրականութեամբ, աղօթած ու հսկած է պատմական վանքերու, մենաստաններու նուիրական կամարներու տակ և մանաւանդ ողջագոյրուած Հայրենիքի իր հարազատ ժողովուրդին հետ, բաժնած է անոր խինդն ու խանդավառութիւնը, լսած է անոր կառուցումի զրնգուն երգերը, բազմած անոր սեղաններուն առջեւ և մեծ բերկրանքով կիսած անոր սուրբ քրտինքով շահած արդար հացն ու սեղանի միւս բարիքները:

Սրբազան հեղինակի «Հայրենի արեւիմ տակ» գիրքը սովորական ճանապարհորդական ուղեգրութիւն մը չէ, այլ քնարական վառ զեղումներու և խորհրդածութիւններու, հայրենասիրական տեսիլքներու երփներանգ ծաղկեփունջ մը, ինքնաբոլիս, անկեղծ, անմիջական և ջերմ:

Այս հատորին մէջ Սրբազանն արդէն հասուն գրող մըն է, որ ունի դիտող ու սուր աչք, թափանցող միտք, գրական հարուստ փորձ և գողտրիկ ճաշակ: Լեզուն իւրայատուկ է, պատկերաւոր, թեւաւոր մտածումներով և պատկերներով հարուստ: Այս ամէնը նոր հրապոյր նոր գրաչույթին տուած է գրքին:

«Հայրենի արեւիմ տակ» գիրքը կը բաղկանայ տասնչորս ենթագլուխներէ, որոնցմէ իւրաքանչիւրն ունի իր առանձին համն ու հոտը, բոյրն ու գոյնը: Հատուածներ կան գրուած գրական բարձր ճաշակով, ներշնչումով: Այդպիսին է «Կարօտ հայրենի»-ն (էջ 5), սրտառուչ հայրենասիրութեամբ և յուզականութեամբ գրուած առաջին պատկերը, ուր համոզիչ ձեւով կը տրուին առաջին անգամ Հայրենի Հողի վրայ ոտք դնող հայրենադարձ ու տարագիր հայուն հոգեկան խոր ապրումները, ուրախութիւնն ու սրտառուչ երջանկութիւնը:

Գրքի յաջորդ էջերուն վրայ, սրբազանը կու տայ Հայաստանի և Ս. Էջմիածնի մէջ

¹¹ Նոյն տեղը, էջ 25-27:

իր տեսածներու և զգացածներու լրիւ պատկերը, իր ապրումներու, խորհրդածութիւններու, տեսիլքներու «քարտեզը»: Զերմութեամբ, բարեպաշտիկ զգացմունքներով և հաւատքի կրակով են գրուած Ս. Էջմիածնի նուիրուած տողերը: Հայրենի Հողի վրայ, վերածնունդ և վերաշինուող Հայրենիքի ծոցին մէջ, հայ ժողովուրդի Սրբութիւն Սրբոց Ս. Էջմիածնի «ազգային-եկեղեցական կեանքի վերագարթնումի և վերակազմակերպման ձեռնարկներն ու ճիգերը» անհուն բերկրանքով կը լեցնեն սրբազանի սիրտը¹²:

1955-ի Յունուարին, Վազգէն Սրբազան վեցերորդ անգամ ըլլալով կ'այցելէ Սոփեական Հայաստան, սրտին մէջ՝ «նոյն ուժգնութեամբ... կարօտն ու ծարար Հայրենի հողին ու ջուրին, Երեւանի շէնքերուն և հայաստանցի իր (ընդգծումը մերն է Ն. ԱՔՂ. Ա.) եղբայրներուն»:

«Սոփեական Հայաստան 1955-ին» յօդուածին մէջ Վազգէն Սրբազան դարձեալ հետեւեալ գեղեցիկ և պատկերաւոր տողերը կը գրէր իր տպաւորութիւններու մասին. «Մասիս սարը ինչքան դիտես, Հայաստանի ճամբաներէն ինչքան քաղես, Երեւանի պաղ ջուրերու աղբիւրներէն ինչքան խմես չես յագեճաւ: Քաղցր է սէրը Հայրենիքի»¹³:

Վերոյիշեալ գրական վաստակներէն զատ, Վազգէն Վեհափառ հայ պարբերական մամուլին մէջ ունի տպագրած բազմաթիւ յօդուածներ և ակնարկներ:

1955-ին, կրօնական ասպարէզին մէջ մտնելէն ճիշդ տասներկու տարի ետք, երիտասարդ հասակին (47 տարեկանին), Ս. Վազգէն Եպիսկոպոս Պալճեան կ'ընտրուի կաթողիկոս Ամենայն Հայոց և հայրապետական օծում կը ստանայ Հոկտեմբեր 2-ին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա., իր ընտրութեան և օծման հանդիսութիւններէն ետք, արտասահմանի պատգամաւորները և հայրենի ժողովուրդը կը մխիթարէ ու կը խանդավառէ նորանոր եկեղեցական արարողութիւններով: 1955-ի Հոկտեմբեր 6-ին, ան Եպիսկոպոս կը ձեռնադրէ հինգ երուսաղիմական (Տ. Հայկազուն Աբրահամեան, Տ. Պարգեւ Վրթանէսեան, Տ. Սերովբէ Մանուկեան, Տ. Հայրիկ Ասլանեան, Տ. Շնորհք Գալուստեան) և երկու էջմիածնական (Տ. Վարդան Տէր-Սահակեան և Տ. Եզնիկ Ազնաւուրեան) ծայրագոյն վարդապետները¹⁴:

1926 թուականին Գէորգ Կաթողիկոս Սուրենեանի կատարած Միւռնոսօրհնէքէն ի վեր, երկար ժամանակ միւռնոն չէր օրհնուած Ս. Էջմիածնի մէջ: Վազգէն Կաթողիկոս 1955-ի Հոկտեմբեր 8-ին, տասներկու եպիսկոպոսներու ընկերակցութեամբ, շքեղ հանդիսութեամբ և բազմամբոխ ժողովուրդի ներկայութեան, Ս. Միւռնոն կ'օրհնէ և հայրենի ժողովուրդին մէջ կ'արծարծէ բարեպաշտական եռանդ:

Վազգէն Վեհափառ հայրապետ, իր գահակալութեան յաջորդ տարին, 1956 Փետրուար 10-էն մինչեւ Մայիս 13, Կիլիկիոյ Անթիլիասի Աթոռի կաթողիկոսական ընտրութեան առթիւ, այցի կ'ելլէ արտասահմանի հայութեան: Ան, Գրիգոր Վկայասէր, Խաչիկ Անեցի, Ստեփանոս Սալմաստեցի, Միքայէլ Սեբաստացի, Փիլիպպոս Աղբալեցի և այլ կաթողիկոսներու նման, իբր Ամենայն Հայոց հովուապետ կ'այցելէ իր աշխարհասփիւռ հօտին: Կը շրջի Լիբանան, Եգիպտոս, Իտալիա, Անգլիա, և իր հայրապետական յորդորներով ու խորիմաստ քարոզներով կը մխիթարէ ու կը քաջալերէ տարագիր հայ ժողովուրդը:

Վազգէն Կաթողիկոսի արտասահման ուղեւորութիւնը կը զօրացնէ Հայ Եկեղեցւոյ և ազգին միասնականութիւնը և մեծապէս կը նպաստէ հայապահպանութեան սրբազան գործին, հայրենասիրութեան և էջմիածնասիրութեան զգացումներ բորբոքելով բոլոր Հայ սիրտերուն ու հոգիներուն մէջ:

Վազգէն Ա. նաեւ շինարար կաթողիկոս մըն էր: Իր հայրապետութեան առաջին

¹² Նոյն տեղը, էջ 29-30:

¹³ Նոյն տեղը, էջ 31:

¹⁴ Գրիգորեան Գ. Վրդ. Մեսրոպ, Վեհափառ, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 14:

օրէն իսկ մեծ ուշադրութիւն դարձուց Հայաստանի եկեղեցիներուն ու վանքերուն և դրացի երկիրներու հայկական եկեղեցիներուն վրայ: Ան Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի գործակցութեամբ, հայրենի կառավարութեան օգնութեամբ և արտասահմանի Հայոց լիաբուն նուիրատուութիւններով կը ձեռնարկէր շինարարական աշխատանքներու: Անոր գահակալութեան շրջանին մարմարապատուեցաւ Ս. Էջմիածնի Մայր տաճարի յատակը, վերակառուցուեցաւ Աւագ Խորանը, սալայատակուեցաւ եկեղեցւոյ շրջափակը, բարեկարգուեցաւ և կանաչազարդուեցաւ վանքի բակը, հիմնովին վերանորոգուեցան Երեմիայի ու Սինոդի շէնքերը: Նորոգուեցան Օշականի, Բջնիի, Պայազիտի եկեղեցիները, Ս. Հռիփսիմէի, Ս. Գայիանէի, Ս. Շողակաթի, Խոր Վիրապի, Գեղարդայ վանքի, Տաթևի, Օձունի, Թեղինեաց, Գանձասարի և այլ եկեղեցիները¹⁵:

Վերջին տարիներուն, Վազգէն Վեհափառի կեանքէն վերը թուարկուածներու մասին բաւական գրուեր և խօսուեր է, սակայն անոր ծննդեան 110-ամեակին առթիւ, որ կը լրանայ 2018-ի Սեպտեմբեր 20-ին, կ'ուզեմ դարձեալ վերլուծել և անդրադառնալ անոր կեանքին ու գործին: Գրական այս ակնարկը յարգանքի ձօն մըն է Վեհափառի անթառամ յիշատակին, ու փոքրիկ ծաղկեփունջ մը անոր սպիտակ մարմարեայ շիրիմին:

Այս հանգրուանի սեմին, մեր յարգանքի և հիացման առարկայ կը դառնայ երկար տարիներու վրայ բաշխուած կեանք մը, որը ճշմարտապէս, եղած է հաւատքի, նուիրումի և գործի կեանք:

Մարդ՝ որուն Վերին Նախախնամութիւնը կանխատեսած էր բազմելու Ս. Գրիգոր Լուսաւորչի Առաքելաշաւիղ գահին, ծառայելու իր ժողովուրդին ու եկեղեցիին¹⁶:

Թող ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայրապետական Գահը մնայ անսասան նման Մասիս սարին և պայծառ՝ Լուսաւորչի անմար կանթեղին:

Ն. ԱԲՂ. ԱԼՈՅԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ԾԱՂԿԵՓՈՒՆՁ ՄԸ ՄԱՐՄԱՐԷ ՇԻՐՄԱՔԱՐԻՆ

(Վազգէն Ա. Վեհափառի Ծննդեան 110-ամեայ յարելեանին առթիւ)

Ամփոփում

Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ծննդեան 110-ամեայ յոբելեանին առթիւ, գրական այս ակնարկով անդրադարձած ենք անոր կեանքին ու գործին, գրական ժառանգութեանն ու հայրապետական գործունէութեանը: Այս յանգրուանի սեմին, մեր յարգանքի և հիացման առարկայ դարձուցեր ենք 110 տարիներու վրայ բաշխուած կեանք մը, որը, ճշմարտապէս, եղած է հաւատի, նուիրումի և գործի կեանք: Վազգէն Վեհափառ մարդ մըն էր, որուն Վերին Նախախնամութեան ոյժը կանխատեսած էր բազմելու Ս. Գրիգոր Լուսաւորչի Առաքելաշաւիղ գահին, ծառայելու իր ժողովուրդին ու եկեղեցիին: Սոյն ակնարկը ձօն մըն է Վեհափառի անթառամ յիշատակին, ու փոքրիկ ծաղկեփունջ մը անոր մարմարեայ շիրիմին:

¹⁵ Նոյն տեղը, էջ 21:

¹⁶ Թաքուկեան Յ., Կեանքի տարիները, Երևան, 2018, էջ 311-314:

FR. N. ALOYAN

A LITTLE BOUQUET OF FLOWERS ON A MARBLE TOMB**(On the 110th anniversary of His Holiness Vazgen I)***Summary*

On his 110th anniversary, this essay discusses the life, literary heritage and patriarchal activity of His Holiness Vazgen I. This essay presents an object of respect and admiration –110 years committed to faith, devotion and hard work. His Holiness Vazgen I was a man who was professed by Providence to occupy St. Gregory the Illuminator's throne to serve his people and church. This is a tribute to the lasting memory of His Holiness, and a little bouquet of flowers on his marble tomb.

